

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

07.12.2016թ.
ժամը 16⁰⁰

ք.Երևան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ա.Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար-խորհրդի նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Խ.Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Կ.Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ
Ժ.Գալստյան «Հայկական էկոտուրիստական ասոցիացիա» ՀԿ
Է. Գրիգորյան «Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» ՀԿ
Գ. Օգանեզովա «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ
Վ.Հակոբյան «Դեմետրա-էկո» բնապահպանական-գյուղատնտեսական ՀԿ նախագահ
Լ.Թասալյան «Գիտակցիո իրավունք» իրավապաշտպան ՀԿ գործադիր տնօրեն
Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Ռ.Խաչատրյան «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի» նախագահ
Ի. Չարաֆյան «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ
Գ. Նանյան «Քայլ» ՀԿ
Ա. Միրզոյան «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ
Ա. Համբարձումյան «Հասարակական ձայն» /Civil Voice/ ՀԿ
Մ. Ասատրյան «Հակոբեան բնապահպանական կենտրոն»
Գ. Ալոյան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն»
Ա.Վարդանյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

Հրավիրված էին՝

- Ա.Պետանյան ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական
Վ.Սահակյան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ա.Դռնոյան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ
Թ.Արամյան Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետի տեղակալ
Խ.Խաչատրյան Իրավաբանական վարչության պետ
Վ.Սարգսյան Կենսառեսուրսների կառավարման գործակալության էկոտուրիզմի

Ա.Սուքիասյան

աջակցության և զարգացման բաժնի գլխավոր մասնագետ
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

- 1. Հասարակական խորհրդի նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության ներկայացում:**
- 2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մեթոդաբանության խնդիրները:**
- 3. ԲՀՊՏ-ներում էկոտուրիզմի պլանավորման և կառավարման հարցերը:**

ՀԱՐՑ 1. Հասարակական խորհրդի նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության ներկայացում

Ելույթով հանդես եկավ՝ Արմեն Վարդանյանը

Ներկայացրեց խորհրդի նախորդ նիստում հնչած առաջարկների և ընդունված որոշումների կատարման վերաբերյալ հաշվետվություն

Ելույթով հանդես եկավ՝ Խ. Խաչատրյանը,

Ձեկուցեց ՀՀ Կարմիր գրքում գրանցված Մատնունի ծիրանավոր բույսի՝ Ամուսարի հանքի շահագործման արդյունքում այլ վայրեր տեղափոխելու իրավական հիմքերի մասին: Ներկայացրեց Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածի շրջանակներում հարցի իրավական կարգավորումը:

ՀԱՐՑ 2. 2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մեթոդաբանության խնդիրները:

Ելույթով հանդես եկավ ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ

Ազգանուշ Դոնոյանը: Ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մեթոդաբանության խնդիրները, իրավական ակտերի շրջանակը, որոնցով իրականացվում է փորձաքննական գործընթացը, ՀՀ կառավարության 2014 թվականի արձանագրային որոշմամբ ընդունված ընդերքի ոլորտին վերաբերող մեթոդիկան, միջազգային համաձայնագրերը, պայմանագրերը և Եվրոպական դիրեկտիվները և այլն: Հասարակական խորհրդի անդամներին տեղեկացվեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից բխող 5 ենթաօրենսդրական ակտից 4-ը ընդունվել է վերջին երկու տարվա ընթացքում: Վերջինը՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդիկան, դեռևս մշակված չէ:

Առաջարկով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը

Նախարարն առաջնային համարեց մեթոդիկայի հրատապ մշակումը և հայտնեց, որ միջազգային դոնոր կազմակերպությունների հետ արդեն ձեռք են բերվել պայմանավորվածություններ այդ աշխատանքներին աջակցելու ուղղությամբ:

Ելույթով հանդես եկավ «Հասարակական ծայն» ՀԿ ներկայացուցիչ Ա. Համբարձումյանը Մտահոգություն հայտնեց, որ Ընդերքի մասին օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունների արդյունքում թափոնների կառավարումը դուրս է մնացել միասնական փորձաքննական գործընթացից, ինչը մտահոգիչ է: Բանախոսը կարծիք հայտնեց, որ փորձաքննությունը պետք է լինի ամբողջական:

Ելույթով հանդես եկավ Ա. Մինասյանը

ՀՀ բնապահպանության նախարարության իրավաբանական վարչությանն առաջարկեց ուսումնասիրել բարձրացված հարցը և ներկայացված փաստարկները:

ՀԱՐՑ 3. ԲՀՊՏ-ներում էկոտուրիզմի պլանավորման և կառավարման հարցերը:

Զեկույցով հանդես եկավ «Հայկական էկոտուրիստական ասոցիացիա» ՀԿ նախագահ Ժ. Գալյանը: Ներկայացրեց մինչ օրս էկոտուրիզմի ոլորտում իրականացված աշխատանքները, ինչպես նաև առաջարկեց ՀՀ ԲՆ ԿԿԳ էկոտուրիզմի բաժնի հետ համագործակցելով մշակել նոր ծրագրեր՝ էկոտուրիզը Հայաստանում խթանելու նպատակով: Ներկայացրեց էկոտուրիզմի ռազմավարության, ԲՈՒՀ-երում էկոտուրիզմի մասնագետների պատրաստման հարցերը:

Առաջարկով հանդես եկավ՝ Ա. Մինասյանը

Առաջարկվեց իրականացնել ոլորտի ռազմավարության պլանավորում և ծրագրավորում, ինչը կնպաստի ԲՀՊՏ համակարգի բարեփոխումներին:

Ելույթով հանդես եկավ Ռ. Խաչատրյանը

Բարձրացրեց Մագեիի և ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության տակ գտնվող այլ քարանձավների՝ տուրիզմի համար մասնավորին տրամադրելու գործընթացի հարցը: Բանախոսը բարձրացրեց այդ քարանձավներում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիների պահպանության հարցը, ինչպես նաև քարանձավների կառավարման գործընթացում ՀՀ բնապահպանության նախարարության դերակատարության բարձրացման հարցը: Առաջարկեց դիմել ՀՀ մշակույթի նախարարություն՝ քարանձավները ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությանը հանձնելու առաջարկով:

Ելույթով հանդես եկավ Վ. Հակոբյանը

Տեղեկացրեց, որ «Դեմետրա-էկո» բնապահպանական-գյուղատնտեսական հասարակական կազմակերպությունն ուսումնասիրություններ է իրականացրել ՀՀ Լոռու մարզի Իջևան համայնքի անտառներում, ինչի արդյունքում պարզել է, որ անտառահատումները հիմնականում իրականացվում են շաբաթ և կիրակի օրերին, ինչը թույլ չի տալիս Բնապահպանական պետական տեսչությանը լիարժեք իրականացնել իր վերահսկողական գործառույթը և պարզել հատումների օրինականությունը:

Առաջարկով հանդես եկավ Ա. Մինասյանը

«Դեմետրա-Էկո» բնապահպանական-գյուղատնտեսական հասարակական կազմակերպությանն առաջարկեց մասնակցել դեկտեմբերի 14-ին ՀՀ ԲՆ-ում կազմակերպվելիք աշխատանքային քննարկմանը, որի ժամանակ քննարկվելու են անտառի պահպանման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հարցերը: Նշեց, որ տեսչական բարեփոխումների շրջանակում նախատեսվում է լուծել ոչ աշխատանքային ժամերին և օրերին վերահսկողություն իրականացնելու խնդիրը:

Առաջարկներ

Ա.Մինասյանն առաջարկեց խորհրդի անդամներին ՀՀ բնապահպանության նախարարին կից խորհրդի 2017թվականի աշխատանքային ծրագիրը ձևավորելու նպատակով ներկայացնել հարցեր::

Հանձնարարվեց՝

1.Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Վարդանյանին


«Դեմետրա Էկո» հասարակական կազմակերպության գրության պատասխանի ընթացքը ևս մեկ անգամ քննարկման առարկա դարձնել:

2.Իրավաբանական վարչության պետ Խ. Խաչատրյանին
Ուսումնասիրել միջազգային կոնվենցիաներով ՀՀ կարմիր գրքում գրանցված Մատնունի ծիրանավոր բուսատեսակի տեղափոխման կարգավորման դրույթները:

3. Խ. Հակոբյանին

Արագացնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու աշխատանքները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

Արձանագրեց
Ա.Սուքիասյանը